# ԽՐՈՆԻԿԱ ХРОНИКА

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ավետիք Իսահակյանի մեծ անունով, նրա հանճարեղ պոեզիայով այս օրերին ապրում է ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ սովետական ժողովուրդը, բովանդակ առաջադեմ մարդկությունը, բոլոր նրանք, ում համար անսահմանորեն թանկ է մեծ բանաստեղծի ստեղծագործությունը:

Պոեզիայի պայծառ տոնի գլխավոր իրադարձությունը, որի մասնակիցներն են մեր անծայրածիր հայրենիքի եղբայրական բոլոր հանրապետությունների պատվիրակները, դարձավ հոբելյանական հանդիսավոր նիստը, որ տեղի ունեցավ Վարպետի ծննդյան օրը՝ հոկտեմբերի 30-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում:

Բեմի խորքում Ավ. Իսահակյանի դիմանկարն է: Շողշողում է հոբելյանական տարեթիվը՝ «100»:

Նախագահությունում են ընկ. ընկ. Կ. Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԸ, Բ. Ե. ՍԱՐԿԻՍՈՎԸ, Գ. Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ, Հ. Ք. ԲԱՂՐԱՄՅԱՆԸ, Պ. Պ. ԱՆԻՍԻՄՈՎԸ, Վ. Բ. ՂԱԼՈՒՄՅԱՆԸ, Հ. Մ. ՈՍԿԱՆՅԱՆԸ, Մ. Բ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ, Ռ. Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ, Ե. Ռ. ԱՍԾԱՏՐՅԱՆԸ, Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալներ Ռ. Ք. ՍՎԵՏԼՈՎԱՆ, Գ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, կուսակցության Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ն. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ, Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վ. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ, կուսակցական և սովետական ղեկավար աշխատողներ, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի անդամներ, գրողներ, գիտության և կուլտուրայի գործիչներ, արտասահմանյան հյուրեր, Ավ. Իսահակյանի հարազատներն ու մերձավորները:

Այստեղ են նաև համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ա. ՍՈՒՐԿՈՎԸ, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղարներ Մ. Կ. ԼՈՒԿՈՆԻՆԸ, Մ. Ա. ԴՈՒԴԻՆԸ, եղբայրական հանրապետությունների և երկրի քաղաքների պատվիրակությունների ղեկավարները:

Հոբելյանական հանդիսավոր նիստը բացեց հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԸ:

— Իր բազմադարյան պատմության ընթացքում,— ասաց նա,— ժողովուրդը կյանք է տալիս այնպիսի գործիչների ու դեմքերի, որոնք սարեգրության մատյաններում ունենում են միայն ծննդյան թվեր և ոչ երբեք՝ մահվան: Անհատներ են նրանք և միևնույն ժամանակ՝ ամբողջական ու ամբողջացված երևույթներ, որ իրենց հանճարի կնիքն են դրոշմում ինչպես իրենց ժամանակի, այնպես էլ գալիքի վրա:

Բոլոր ժողովուրդները նրանց անմահներ են կոչում: Եվ նրանց անմահությունը դրսևորվում է այն կարողության մեջ, որով տվյալ անհատի կենսահաստատ գաղափարներն ու գործերը շարունակում են ապրել այսօր, արդյունավետ պտղաբերել վաղը և հավիտենապես:

Այդպիսի մի բանաստեղծ-երևույթ է Ավետիք Իսահակյանը, որի ստեղծագործությունները վաղուց արդեն դարձել են մեր ժողովրդի կյանքի ուղեկիցը, իսկ նրա անունը՝ հայ ժողովրդի ամենանվիրական անուններից մեկն է:

Իսահակյանի արվեստը լայնորեն դուրս է եկել Սովետական Հայաստանի և մեր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության սահմաններից: Նրա անունը իրավամբ դասվում է համամարդկային մշակույթի ամենամեծ անունների շարքում: Նրա արվեստը իրավամբ դարձել է սովետական բոլոր մարդկանց հոգևոր հարստության թանկագին մասը:

Դեղարվեստական ստեղծագործության ամենամեծ քննադատը ժամանակն է: Եվ անցնող ժամանակի հետ ոչ թե խամրում, այլ ավելի են պայծառանում Իսահակյանի պոեզիայի մարգարիտները: Յուրաքանչյուր նոր սերունդ նրա մշտադալար տողերից, չխամրող գույներից, խոր փիլիսոփայական էությունից անընդհատ նորանոր արժեքներ, բարոյական ու էսթետիկական հրաշալիքներ է քաղում: Մեկ հարյուրամյակ է

անցել նրա ծննդյան օրից: Ժամանակն անձեռակերտ պատվանդան կանգնեցրեց, որի վրա բարձրանում է մեծ բանաստեղծի, անզուգական հայրենասերի և ինտերնացիոնալիստի, համաժողովրդական մեծ Վարպետի, մեր ժամանակակցի ու գալիքի Քաղաքացու՝ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ հզոր կերպարը:

Ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը ներկայացնում է Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությանը մասնակցելու եկած եղբայրական միութենական հանրապետությունների պատվիրակություններին: Նա ասում է, որ հոբելյանական հանդիսություններին մասնակցում են հյուրեր Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Կոլումբիայից, Ֆիլիպիններից և ուրիշ երկրներից:

Հոբելյանական հանդեսին մասնակցում են սփյուռքահայ մշակույթի ներկայացուցիչներ Լիբանանից, Ֆրանսիայից, Պորտուգալիայից, ԱՄՆ-ից և ուրիշ երկրներից:

Դիմելով հյուրերին, ընկ. Կ. Ս. Դեմիրճյանն ասում է.

— Թանկագին ընկերներ: Ձեր մասնակցությունը իսահակյանական հանդիսություններին այս հոբելյանը դարձնում է ժողովուրդների բարեկամության, գրականությունների բարեկամության իսկական տոն:

Թույլ տվեք Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության և Մինիստրների սովետի անունից, ամբողջ հայ ժողովրդի անունից ողջունել մեր թանկագին հյուրերին, նրանց մաղթել քաջառողջություն, անձնական մեծ երջանկություն և ստեղծագործական նոր հաջողություններ:

Հոբելյանական հանդիսավոր նիստը հայտարարվում է բացված:

Հնչում են Սովետական Միության և Հայկական ՍՍՀ-ի պետական հիմները:

Ելույթ է ունենում Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարության համամիութենական հոբելյանական կոմիտեի նախագահ, ՍՍՀՄ գրողների միության վարչության քարտուղար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ա. ՍՈՒՐԿՈՎԸ:

ՍՍՀՄ գրողների միության վարչության հանձնարարությամբ նա ջերմ ողջույններ է հաղորդում Հայաստանի աշխատավորությանը:

— Ինձ համար հաճելի է հաղորդել,— ասում է Ա. Սուրկովը,— որ մեր երկրի բոլոր ծայրերում, ամենուրեք մեծ և բեղմնավոր նախապատրաստական աշխատանք է կատարվել պանծալի հոբելյանի առթիվ, լույս են տեսել Իսահակյանի ստեղծագործությունների գրքեր, ժողովածուներ, որ նրա բանաստեղծությունները կհնչեն և՛ վաղը, և՛ ապագայում:

ՎԱՐՊԵՏ բարձր կոչման հայ ժողովուրդն արժանացնում է նրանց, ովքեր արվեստի կամ գրականության մեջ առավել լիակատարությամբ են արտահայտել ժողովրդի հոգին:

— Ուրախությամբ եմ կատարում ինձ համար պատվավոր հանձնարարությունը և Սովետական Հայաստանի արվեստի գործիչներին ջերմ շնորհավորանքներ ու բարեմաղթություններ եմ հաղորդում մեր երկրի բոլոր հանրապետությունների արվեստի գործիչների կողմից,— իր ելույթում ասաց ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրի տեղակալ Վ. Ֆ. ԿՈՒԽԱՐՍԿԻՆ:

Ավետիք Իսահակյանի ժառանգությունը հայ ժողովրդի կյանքի, նրա ողբերգական հակատագրի, մեծ Հոկտեմբերից հետո նրա պետական, սոցիալական ու հոգևոր վերածննդի՝ իր թափով, բովանդակությամբ և գեղարվեստական կատարելությամբ անկրկնելի բանաստեղծական հանրագիտարանն է:

— 1875 թվականի հոկտեմբերի 30-ը՝ պոեզիայի համաշխարհային օրացույցի տոնական լչերից է,— իր ելույթում ասաց Հայաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ:

Իսահակյան-մարդը և, մանավանդ, Իսահակյան-բանաստեղծը ձևավորվեց մեր ժողովրդի երկհազարամյա գոյության ամենադրամատիկ ժամանակներում: Եվ, այնուամենայնիվ, Ավետիք Իսահակյան-բանաստեղծը եկավ ոչ թե ժխտելու, այլ հաստատելու. հաստատելու կյանքը, սերը, բնությունը, «Տիեզերքի պերճ հյուսվածքը»—մարդուն:

Արևելյան իմաստությունը հաստատում է, թե «Մեծերը գալիս են, բայց չեն գնում»: Ավետիք Իսահակյանը նույնպես եկավ և չգնաց, որովհետև աշխարհին թողեց «հրեղեն խոսքի» իր փայլատակումները, որ այսօր էլ Իլյա Էրենբուրգի վկայությամբ՝ «օգնում են մարդկանց ապրելու»: Նրա շատ բանաստեղծություններ, լեգենդներ, պատմվածքներ հիմն են արևի, կյանքի, գեղեցկության, իսկ «Լիլիթը» կարելի է դասել մարդկային սերը մարմնավորող ամենահանճարեղ գործերի շարքը, որ երբևէ ստեղծել է մարդկության բանաստեղծական երևակայությունը:

Միկրոֆոնին է մոտենում ՌՍՖՍՀ պատվիրակության ղեկավար, բանաստեղծ Մ. ԴՈՒԴԻՆԸ: Նա ասում է.

— Ռուսաստանի Ֆեդերացիայի գրողների անունից, Լենինգրադի գրողների անունից, որի ստեղծագործական կազմակերպությանը պատիվ ունեմ պատկանելու, ես շնորհակալություն եմ հայտնում այս հնամենի քարաշատ երկրին,

որ կոչվում է Հայաստան: Ես շնորհակալություն եմ հայտնում կյանքի այս եռնագույն պահին՝ Սևանին, շնորհակալություն եմ հայտնում այս բարձր ու ջինջ երկնքին այն բանի համար, որ նրանք եղել են ուրախության ու վշտի այն աշխարհը, որտեղ մեծացել է բարեկամության և լույսի երգիչ, մարդկային տխրությունների և հույսերի երգիչ Ավետիք Իսահակյանը: Ես շնորհակալություն եմ հայտնում Ավ. Իսահակյանի հոգուն, պոեզիային, այն բանի համար, որ նա Հայաստանը ավելի մոտիկ ու հասկանալի է դարձրել մեր հայրենիքի և ամբողջ աշխարհի ժողովուրդների լենինյան եղբայրությանը:

— Ամբողջ սովետական երկրի հետ միասին,— իր ելույթում ասաց Ուկրաինայի գրողների միության վարչության առաջին քարտուղար Վ. ԿՈԶԱՉԵՆԿՈՆ,— հայ ժողովրդի մեծ զավակ, ականավոր գրող և հասարակական գործիչ Ավետիք Իսահակյանի հոբելյանը լայնորեն նշում է նաև մեր Ուկրաինայի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը:

Սովետների երկրի ամենակարկառուն գրողների համաստեղության մեջ Մ. Գորկու, Մ. Շոլոխովի, Յա. Կուպալայի, Յա. Ռայնիսի, Պ. Տիչինայի, Ս. Ջիքովանիի, Ս. Այնիի, Այբեկի, Ս. Վուրղունի անունների կողքին որպես առաջին մեծության աստղ շողում է հայ ժողովրդի մեծ զավակ Ավետիք Իսահակյանի անունը: Բանաստեղծի խոսքն այսօր լսվում է անծայրածիր Սովետական Միության ամենահեռավոր անկյուններում:

Ելույթ է ունենում Բելոռուսիայի գրողների միության նախագահ ՄԱՔՍԻՄ ՏԱՆԿԸ:

— Իսահակյանի վաղ շրջանի ստեղծագործություններում արտահայտվել է իր ժողովրդի նակատագիրը: Նա, ում քնարը երբեք չի կեղծել, երկար որոնել է հիշտ նանապարհը: Այդ ամենը համահունչ է նաև Յանկա Կուպալայի, Յակուբ Կոլասի պոեզիային, բանաստեղծներ, որոնք եղբայրական հայ ժողովրդի մեծ երգչի հետ կապված էին ջերմ սիրով ու բարեկամությամբ:

— Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունն անհիզելիորեն, օրգանապես կապված է հայ ժողովրդի պատմության հետ,— ընդգծեց Ուզբեկական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, Ուզբեկստանի գրողների միության վարչության նախագահ, սոցիալիստական աշխատանքի հերոս Ք. ՅԱՇԵՆԸ:— Այդ ստեղծագործությունն ինքը հայ կուլտուրայի, հայ գրականության պատմության մի ամբողջ դարաշրջան է: Նրա ստեղծագործությունները թարգմանված են և այսօր հնչում են ռուսերեն լեզվով, մեր երկրի և ամբողջ աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով:



Ղազախական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, Ղազախստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Ա. ԱԼԻՄԺԱՆՈՎԸ հուզմունքով խոսեց հայ ժողովրդի առատաձեռնության մասին, որ տվել է մեծ տաղանդներ, ստեղծել հոյակապ գրականություն:

Խոսքը տրվում է Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. ՄԺԱՎԱՆԱԶԵԻՆ:

— Թանկագին բարեկամներ,— ասաց նա,— այսօր հինավուրց Հայաստանի մայրաքաղաքը, ինչպես շատ անգամ անցյալում, ջերմորեն ու սիրալիր կերպով իր բարի գիրկն է ընդունել մեր մեծ, անծայրածիր հայրենիքի ամենատարբեր վայրերի պատվիրակներին, որոնք այստեղ են եկել մարդկության ազատության և երջանկության համար բազմադարյան համատեղ պայքարում կոփված անխախտ բարեկամության ու եղբայրության ճանապարհներով, այն ճանապարհներով, որոնք միացնում են ոչ միայն մեր քաղաքներն ու գյուղերը, այլև, է՛լ ավելի մեծ չափով, սրտերը:

Եղբայրական սիրո և միաբանության հենց այդ ճանապարհով ենք մենք եկել ձեզ մոտ Վրաստանից՝ բազմադարյան ինտերնացիոնալ գրականության օրրանից, որպեսզի ձեզ հետ միասին գլուխ խոնարհենք հանճարեղ Ավետիք Իսահակյանի՝ ոսկեղեն Հայաստանի անմահ սոխակի վիրխարի սավերի առջև, տուրք տանք նրա բանաստեղծական արվեստի հսկայական սիրանքին, որն իրավամբ կազմում է համամարդկային կուլտուրայի պարծանքը:

Ադրբեջանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Ի. ԿԱՍՈՒՄՈՎԸ իր ելույթում ասաց.

— «Երբ երկիրը տիեզերքի կենտրոնն է, ապա երկրի կենտրոնը պոեզիան է»,— այսպես էին ասում հին իմաստունները, պոեզիան ըմբռնելով ոչ միայն որպես մեղեդիական, անկանջ շոյող տաղաչափություն, այլև որպես իրենց նախորդների, ժամանակակիցների և սերունդների ներքին աշխարհի արտահայտման վառ պատկերավոր ձև: Իսկական պոեզիան միշտ իր վրա վերցրել է, վերցնում է և կվերցնի իր ժողովրդի հոգու ամբողջ կուրյան մունետիկի առաքելությունը: Եվ հենց այդպիսին էր Ավետիք Իսահակյանը՝ հայ ժողովրդի հոգու, նրա ուրախությունների և ցավի, նրա արժանապատվության և ազգային հանդեպ հավատի արտահայտիչը:

Սրա մեջ է նրա հանճարեղությունը, նրա պոեզիայի անանց արժեքը, որը խնամքով մի սերնդից մյուսին կփոխանցվի գալիք, բազում դարերի ընթացքում:

Ամբիոնի մոտ է Լիտվայի գրողների միության վարչության նախագահի տեղակալ Ա. ՄԱԼԴՈՆԻՍԸ:

— Շատ բանաստեղծներ են գրել հայրենի երկրի ու նրա մարդկանց մասին, հայրենիքի, որպես ընդհանուր ճակատագրի մասին՝ ժամանակի և պատմության մասշտաբներով.— ասում է նա:— Քչերին է հաջողվել մի քանի տողով զարմանալի պարզությամբ և ցայտունությամբ ստեղծել հայրենիքի անկրկնելի, տեսանելի կերպարը, որն ասես հասնում է դարերի խորքը և միևնույն ժամանակ ուղղված է ապագային, մարդկային պարզ արտահայտություններով հաղորդել իր խորին որդիական սերը: Այդպիսի բանաստեղծությունների միջոցով հեռավոր ընթերցողն անգամ ճանաչում, իր համար հայտնագործում է ժողովրդին ու երկիրը, հասկանում և ճանաչում է նրան, երբ հրաշքով տեսնում է այն հողը, որը ներշնչել է բանաստեղծին:

Ավետիք Իսահակյանի պոեզիան մի հիմն է ի պատիվ մարդու, գեղեցիկ ու լուսավոր կյանքի համար նրա պայքարի:

Այնուհետև ելույթ ունեցան՝ Մոլդավիայի գրողների միության վարչության քարտուղար Ի. ՉՈԲԱՆՈՒՆ, Լատվիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. ԳՈՐԻՍԸ, Կիրգիզիայի գրողների միության վարչության առաջին քարտուղար Տ. ԱՍԿԱՐՈՎԸ, Թուրքմենական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, Թուրքմենիայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գրող Կ. ԿՈՒԼԻԵՎԸ, Էստոնացի գրող Լ. ՄԵՐԻՆ, Ռոստովի աշխատավորության պատվիրակության ղեկավար, կուսակցության Պրոլետարսկայայի շրջկոմի քարտուղար Օ. ՇԵԼԱԴԻՆԸ, Կաբարդա-Բալկարիայի ժողովրդական բանաստեղծ Կ. ԿՈՒԼԻԵՎԸ, ֆրանսիացի նշանավոր հայագետ, պրոֆեսոր ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ, ամերիկահայ գրող ՎԱՀԵ ՀԱՅԿԸ:

Հանրապետական հոբելյանական հանձնաժողովի քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Լ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆԸ ի սրտե շնորհակալություն հայտնեց հանդիսություններին մասնակցած՝ հայ մեծ բանաստեղծի բարեկամներին, թարգմանիչներին ու հրատարակիչներին, այն գրքերի և ժողովածուների հեղինակներին, որոնք լույս են ընծայվել Մոսկվայում, Լենինգրադում, եղբայրական միութենական հանրապետություններում:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԸ, փակելով հանդիսավոր նիստը, ասաց, որ պոեզիայի ուրախ տոնը քայլում է սոցիալիստական Հայաստանի հողով: Այն մեր սրտերը է՛լ ավելի է համակում սիրո, եղբայրական միաբանության և մեր սոցիալիստական հայրենիքի համար ունեցած հպարտության զգացումով, նպաստում մեր ժողովուրդների եղբայրական գրականությունների հետագա մերձեցմանն ու փոխազդեցությանը:

Հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի համաժողովրդական տոնակատարությունը վերածվեց մեր մեծ հայրենիքի ժողովուրդների անխորտակ բարեկամության ու միասնության, Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի հուզիչ ցույցի, դարձավ սովետական բազմազգ կուլտուրայի տոնը:

Նա խորին շնորհակալություն հայտնեց ՍՍՀՄ գրողների միության վարչությանը, համամիութենական հոբելյանական կոմիտեի անդամներին, եղբայրական միութենական հանրապետություններից եկած բոլոր հյուրերին՝ մեծ Վարպետի հասցեին, հայ մշակույթի հասցեին ասված սրտաբուխ, ջերմ խոսքերի համար, իսահակյանական հանդիսություններին մասնակցած արտասահմանյան բոլոր հյուրերին:

Հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը հայտարարվում է փակված:

Դահլիճում վեհորեն հնչում են Սովետական Միության և Հայկական ՍՍՀ-ի պետական հիմների մեղեդիները:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սովետական բազմազգ մշակույթի ականավոր վարպետների շարքում Ավետիք Իսահակյանի անունը իրավամբ գրավում է ամենապատվավոր տեղերից մեկը: Սովետահայ մեծ հայրենասեր բանաստեղծը, նշանավոր հասարակական գործիչը արվեստագետի իր պատվավոր առաքելությունն էր համարում ծառայել հայրենիքին, կոմունիզմի իդեալներին: Ավետիք Իսահակյանը բանաստեղծական ոգեշունչ խոսքով, կրքոտ հրապարակախոսությամբ փայլուն էջ գրեց սովետական ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ոսկե գրքում: Նրա ստեղծագործությունը գիտեն և սիրում են ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանում: Ուստի, Հայաստանի այդ նշանավոր զավակի ծննդյան 100-ամյակը լայնորեն նշվեց բոլոր եղբայրական միութենական հանրապետություններում, աշխարհի շատ երկրներում: Հոբելյա-